

Գարնանային ուսումնական դասընթացի մասնակցության հրավեր

Երևանի պետական համալսարանը հայտարարում է գարնանային ուսումնական դասընթացի մասնակցության մրցույթ, որը նախատեսվում է անցկացնել «Միջմշակութային հանդիպումներ ակադեմիական միջավայրում և աշխատավայրում» գրանտային ծրագրի շրջանակում: Ամառային դպրոցը հովանավորվում է Նորվեգիայի կրթության միջազգային համագործակցության կենտրոնի կողմից:

Ծրագրի նկարագրությունը

Հարավային Կովկասի և Նորվեգիայի գործընկեր բուհերի միջև 2018 թվականից անցկացվում է համատեղ ծրագիր, որի շրջանակում հաստատվել է կառուցողական համագործակցություն՝ լեզվական և մշակութային բազմազանության պայմաններում գիտական և աշխատանքային գործունեություն ծավալելու, համաշխարհայնացման ներկա համատեքստում միջմշակութային բախումների մարտահրավերներին դիմակայելու հմտություններ ձեռք բերելու նպատակով: Ծրագրի շրջանակում 2020 թ. գարնանը նախատեսվում է անցկացնել ուսումնական դասընթաց «Կարծրատիպեր, կանխակալ կարծիքներ և ատելության խոսքի դրսևորում միջմշակութային հաղորդակցության համատեքստում» խորագրով:

Ամառային դպրոցի նկարագրությունը

«Կարծրատիպեր, կանխակալ կարծիքներ և ատելության խոսքի դրսևորում միջմշակութային հաղորդակցության համատեքստում» խորագրով գարնանային ուսումնական դասընթացը երկշաբաթյա դասընթացների ծրագիր է, որը տեղի կունենա 2020 թ. մարտի 15-29-ը (Ճանապարհորդության օրերը ներառյալ): Դասընթացները տեղի կունենան մարտի 15-20-ը Թբիլիսիում, իսկ 21-ից 28-ը՝ Օսլոյում: Ուսումնական ծրագրով ուսանողների համար նախատեսվում են մի շարք դասախոսություններ, ուսումնական այցեր գիտակրթական հաստատություններ և թիմային աշխատանքներ: Դասընթացներն ընդգրկում են հետևյալ թեմաները՝

- Միջմշակութային հաղորդակցության հիմնարար հասկացություններն ու դրանց տարատեսակ ընկալումները,
- Միգրացիայի խնդիրն առնչվող կարծրատիպեր,
- Միջմշակութային հաղորդակցման համատեքստում ծագող կանխակալ կարծիքներ և ատելության խոսք,
- Ատելության խոսքի դրսևորումները և դրանց ազդեցությունն ու հետևանքներն անհատի և հասարակության մակարդակներում:

Երկշաբաթյա դասընթացի ավարտին մասնակիցներին կտրվի մասնակցության հավաստագիր:

Աշխատանքային լեզուն անգլերենն է:

Ծրագիրը կհոգա Երևան-Թբիլիսի-Երևան ճանապարհածախսը, Թբիլիսի-Օսլո-Թբիլիսի չվերթներն ու օդանավակայանի տեղափոխման ծախսերը: Ներառվում են նաև մուտքի թույլատրության և կացարանի, ինչպես նաև սննդի մասնակի ծախսերը Թբիլիսիում և Օսլոյում: Ճամփորդական ապահովագրության ծախսերը ներառված չեն: Ուսանողներին կտրվի նաև օրապահիկ՝ 250 NOK (նորվեգյան կրոն) գումարի չափով:

«Կարծրատիպեր, կանխակալ կարծիքներ և ատելության խոսքի դրսևորում միջմշակութային հաղորդակցության համատեքստում» գարնանային ուսումնական դասընթացի մասնակցության հայտ կարող են ներկայացնել ԵՊՀ եվրոպական լեզուների ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի և ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողները: Մրցույթին մասնակցելու համար մինչև 2019 թ. **նոյեմբերի 22-ը** ԵՊՀ միջազգային համագործակցության վարչություն պետք է ներկայացնել համառոտ ինքնակենսագրություն (CV) և նամակ-հիմնավորում (Motivation Letter) անգլերենով: Մրցութային կարգով ընտրված լավագույն ուսանողները կհրավիրվեն հարցազրույցի, որը կկայանա 2019 թ. **նոյեմբերի 28-ին՝ ժամը 11.30-ին**: Խնդրում ենք հայտերն ուղարկել amarkarov@ysu.am և paronyan_shushan@hotmail.com էլ. հասցեներին: